ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 մայիսի 2017 թվականի N 68-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մարտի 21-ի N 47-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2017 թվականի մայիսի 16-ի N 9069-17 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ ***Հարություն Ալեքսանյանին*** 2017 թվականի հունիսի 12-ից մինչև հունիսի 16-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում հինգ օրով, գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հետևյալ համայնքներ՝ գյուղ Հատիս՝ հունիսի 12-ից 14-ը *(երեք օր)* և գյուղ Զովաշեն՝ հունիսի 15-ից 16-ը *(երկու օր)՝ 2017 թվականի իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու համար:*

2. ***Հարություն Ալեքսանյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ ***Արմեն Հակոբյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի մայիսի 17
ք. Հրազդան